## *1.3. Գներ և սակագներ*

### Գների փոփոխություններն ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների, 2003թ. հունվար-դեկտեմբերին

*(նախորդ ամսվա նկատմամբ, %)*

| | Սպառողական գների ինդեքս[1)] | Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս[2)] | Գների ինդեքսը շինարարությունում [3)] | Բեռնափոխադրումների սակագների ինդեքս [4)] | Գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքս[5)] | Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս [6)] |
|---|---|---|---|---|---|---|
| Հունվար | 104.1 | 97.0 | 100.0 | 99.6 | 100.2 | 100.8 |
| Փետրվար | 98.5 | 105.7 | 100.3 | 100.2 | 102.5 | 99.5 |
| Մարտ | 99.5 | 100.0 | 100.0 | 100.6 | 100.0 | 100.6 |
| Ապրիլ | 102.0 | 102.5 | 100.0 | 100.0 | 98.3 | 98.6 |
| Մայիս | 101.2 | 108.1 | 99.9 | 99.6 | 97.4 | 98.0 |
| Հունիս | 101.4 | 95.0 | 99.9 | 99.8 | 81.0 | 102.7 |
| Հուլիս | 94.5 | 103.6 | 100.0 | 100.1 | 71.1 | 101.5 |
| Օգոստոս | 97.7 | 97.7 | 100.0 | 98.3 | 79.4 | 100.6 |
| Սեպտեմբեր | 102.5 | 99.3 | 102.3 | 101.0 | 103.3 | 97.8 |
| Հոկտեմբեր | 99.9 | 100.3 | 100.2 | 98.4 | 101.6 | 99.7 |
| Նոյեմբեր | 102.2 | 106.6 | 100.1 | 97.7 | 102.9 | 103.7 |
| Դեկտեմբեր | 105.2 | 103.0 | 100.0 | 101.5 | 105.3 | 100.1 |
| Դեկտեմբերը 2002թ. դեկտեմբերի նկատմամբ | 108.6 | 121.1*) | 102.6 | 96.7 | 114.1*) | 105.9*) |
| 2003թ. հունվար-դեկտեմբերը 2002թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ | 104.7 | 108.9 | 101.4 | 101.0 | 109.1 | 106.6 |

*) 2003թ. դեկտեմբերի և 2002թ. դեկտեմբերի ընթացիկ գներով հաշված:
[1)] Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվում է նախորդ ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում և հանրապետության 9 մարզերում (բացի Արարատի մարզից) 400 անվանում ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչների գծով:
[2)] Գների դիտարկումը կատարվում է արդյունաբերական ոլորտի 254 բազային կազմակերպություններում` 888 անվանում արտադրանք - ներկայացուցիչների գծով:
[3)] Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության տվյալների:
[4)] Հաշվարկվում է տրանսպորտի 4 տեսակներով (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)` բեռնառաքումների դիտարկված սակագների հիման վրա:
[5)] Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքի իրացման գների և ծավալների հետազոտման տվյալների:
[6)] Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից 92 անվանում արտադրության միջոցների գնման գների և ծավալների հետազոտման տվյալների:

### Գների, սակագների աճի տեմպերը 2002-2003թթ. հունվար-դեկտեմբերին

*(նախորդ տարվա նկատմամբ, %)*



Գների միջին ամսական փոփոխությունները 2002-2003թթ. եռամսյա կտրվածքով՝ ըստ հանրա-պետության տնտեսության առանձին հատվածների ու ապրանքախմբերի

(%)

| | 2002թ. | | | | 2003թ. | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I | II | III | IV | I | II | III | VI |
| Սպառողական գների ինդեքս | 100.3 | 101.2 | 97.1 | 102.1 | 100.7 | 101.5 | 98.2 | 102.4 |
| *այդ թվում՝* | | | | | | | | |
| պարենային ապրանքների (նե - րառյալ ոգելից խմիչք, ծխախոտ) | 100.5 | 101.6 | 95.9 | 102.9 | 101.0 | 102.3 | 97.3 | 103.5 |
| ոչ պարենային ապրանքների | 99.8 | 100.4 | 99.8 | 100.9 | 100.1 | 99.7 | 99.9 | 100.4 |
| ծառայությունների | 100.1 | 100.2 | 99.9 | 100.1 | 100.1 | 100 .4 | 100.1 | 100.05 |
| Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս | 100.7 | 102.8 | 97.9 | 99.0 | 100.6 | 103.6 | 99.6 | 102.7 |
| Գների ինդեքսը շինարարությու-նում | 100.3 | 99.95 | 100.1 | 100.1 | 100.1 | 99.9 | 100.7 | 100.1 |
| Բեռնափոխադրումների սակագների ինդեքս | 100.05 | 100.8 | 98.7 | 101.6 | 100.1 | 99.8 | 99.8 | 99.1 |
| Գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքս | 98.4 | 98.1 | 98.8 | 103.9 | 101.2 | 97.3 | 101.7 | 104.3 |
| Գյուղատնտեսության արտա-դրության միջոցների գնման գների ինդեքս | 99.0 | 101.1 | 98.8 | 102.7 | 100.2 | 100.2 | 99.7 | 101.8 |

***Արտարժութային շուկա:*** 2003թ. դեկտեմբերին նոյեմբերի համեմատ սպառողական և արտարժույթի շուկաներում գրանցվել է գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի, համապատասխանաբար, 5.2% և 0.2% հավելաճ: Դեկտեմբերին 2002թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների 8.6% հավելաճն ուղեկցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 3.3% նվազումով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է սպառողական գների և հաշվարկային փոխարժեքի, համապատասխանաբար, 2.0 և 3.6% հավելաճ: ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը 2003թ. դեկտեմբերին կազմել է 565.49 դրամ, ինչը 3.3% ցածր է 2002թ. դեկտեմբերի համապատասխան ցուցանիշից (584.8 դրամ):

ՀՀ սպառողական գների ինդեքսի և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի փոփոխությունները 2002-2003թթ. հունվար-դեկտեմբերին

*(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, % )*



***Սպառողական գներ:*** 2003թ. դեկտեմբերին ՀՀ սպառողական շուկայում շարունակվել է դեռևս նոյեմբերին գրանցված գնաճի միտումը և երկու ամիսների ընդհանուր սղաճը կազմել է 7.5%: Դեկտեմբերին նոյեմբերի համեմատ արձանագրվել է 5.2% սղաճ, ինչը հիմնականում պայմանավորվել է հացամթերքի որոշ տեսակների, մրգի, բանջարեղենի և ձկնամթերքի զգալի գնաճով: Նշված ժամանակահատվածում հացի, ալյուրի և մակարոնեղենի ընդհանուր գնաճը կազմել է 10.4%: Սպառողական զամբյուղում ունենալով 14.79% տեսակարար կշիռ, նշված ապրանքատեսակների գնաճը նպաստել է սպառողական գների աճին 1.6 տոկոսային կետով: Առանց վերը նշված ապրանքատեսակների գնային փոփոխությունների սպառողական գների ինդեքսը հանրապետությունում կկազմեր 103.6%: Դեկտեմբերին 2002թ. դեկտեմբերի համեմատ նշված ապրանքատեսակների գնաճը կազմել է 38.1% և սպառողական գների աճին նպաստել է 5.6 տոկոսային կետով, այսինքն առանց վերը նշված ապրանքատեսակների գնային փոփոխությունների սպառողական գների ինդեքսը հանրապետությունում կկազմեր 103.0%:

**Սպառողական գների ինդեքսները**

*(դեկտեմբերը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)*

| | *2000* | *2001* | *2002* | *2003* |
|---|---|---|---|---|
| ***Սպառողական գների ինդեքս, ընդամենը*** | 100.4 | 102.9 | 102.0 | 108.6 |
| պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) | 99.8 | 104.1 | 101.9 | 112.4 |
| պարենային ապրանքներ | 99.4 | 104.2 | 103.2 | 113.5 |
| ոգելից խմիչք և ծխախոտ | 102.1 | 103.5 | 91.9 | 102.9 |
| ոչ պարենային ապրանքներ | 101.6 | 99.3 | 102.7 | 100.4 |
| ծառայություններ | 101.9 | 100.6 | 101.5 | 102.1 |

2003թ դեկտեմբերին նոյեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) 7.4%, ոչ պարենային ապրանքների՝ 0.5% գնաճ և ծառայությունների սակագների 0.7% հավելաճ:

**Սպառողական գների հավելաճը 1995-2003թթ. դեկտեմբերին**

*(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)*




2003թ. հունվար-դեկտեմբերին 2002թ. հունվար-դեկտեմբերի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 104.7%, այդ թվում պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 106.1%, ոչ պարենային ապրանքներինը՝ 101.9%, ծառայությունների սակագներինը՝ 101.9%:

2003թ. հունվար-դեկտեմբերին սպառողական գների միջին ամսական հավելաճը կազմել է 0.7% և 0.55 տոկոսային կետով գերազանցել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը (0.15%)

## Սպառողական գների ինդեքսը 2002-2003թթ.

*(% )*

| | Ընդամենը | | այդ թվում | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | նախորդ ամսվա համե-մատ | նախորդ տարվա դեկտեմ-բերի հա-մեմատ | պարենային ապրանքներ | | ոչ պարենային ապրանքներ | | ծառայություններ | |
| | | | նախորդ ամսվա համեմատ | նախորդ տարվա դեկտեմ-բերի հա-մեմատ | նախորդ ամսվա համեմատ | նախորդ տարվա դեկտեմ-բերի հա-մեմատ | նախորդ ամսվա համեմատ | նախորդ տարվա դեկտեմ-բերի հա-մեմատ |
| | ***2002 թվական*** | | | | | | | |
| Հունվար | 102.2 | 102.2 | 103.7 | 103.7 | 99.7 | 99.7 | 100.0 | 100.0 |
| Փետրվար | 99.3 | 101.5 | 99.5 | 103.2 | 99.8 | 99.5 | 100.0 | 100.0 |
| Մարտ | 99.4 | 100.9 | 99.4 | 102.6 | 100.0 | 99.4 | 100.4 | 100.4 |
| I եռամսյակ | 100.9 | 100.9 | 102.6 | 102.6 | 99.4 | 99.4 | 100.4 | 100.4 |
| Ապրիլ | 102.5 | 103.4 | 103.9 | 106.6 | 100.7 | 100.1 | 100.2 | 100.6 |
| Մայիս | 101.7 | 105.2 | 102.5 | 109.3 | 100.4 | 100.5 | 100.2 | 100.9 |
| Հունիս | 99.5 | 104.6 | 99.0 | 108.2 | 100.1 | 100.6 | 100.7 | 101.5 |
| II եռամսյակ | 103.7[1] | 104.6 | 105.5[1] | 108.2 | 101.2[1] | 100.6 | 101.1[1] | 101.5 |
| Հուլիս | 95.0 | 99.4 | 92.1 | 99.6 | 100.2 | 100.9 | 100.0 | 101.6 |
| Օգոստոս | 97.0 | 96.4 | 95.3 | 94.9 | 99.3 | 100.2 | 99.8 | 101.4 |
| Սեպտեմբեր | 99.4 | 95.8 | 99.0 | 94.0 | 100.0 | 100.1 | 99.8 | 101.1 |
| III եռամսյակ | 91.6[1] | 95.8 | 86.9[1] | 94.0 | 99.5[1] | 100.1 | 99.6[1] | 101.1 |
| Հոկտեմբեր | 100.5 | 96.3 | 100.3 | 94.3 | 101.5 | 101.7 | 100.3 | 101.4 |
| Նոյեմբեր | 102.2 | 98.4 | 103.5 | 97.6 | 100.8 | 102.5 | 100.1 | 101.5 |
| Դեկտեմբեր | 103.6 | 102.0 | 105.8 | 103.2 | 100.3 | 102.7 | 100.0 | 101.5 |
| IV եռամսյակ | 106.5[1] | 102.0 | 109.8[1] | 103.2 | 102.6[1] | 102.7 | 100.4[1] | 101.5 |
| ***2003 թվական*** | | | | | | | | |
| Հունվար | 104.1 | 104.1 | 106.7 | 106.7 | 100.4 | 100.4 | 100.4 | 100.4 |
| Փետրվար | 98.5 | 102.5 | 97.6 | 104.2 | 99.7 | 100.1 | 100.1 | 100.5 |
| Մարտ | 99.5 | 102.1 | 99.2 | 103.3 | 100.3 | 100.4 | 99.9 | 100.4 |
| I եռամսյակ | 102.1[1] | 102.1 | 103.3[1] | 103.3 | 100.4[1] | 100.4 | 100.4[1] | 100.4 |
| Ապրիլ | 102.0 | 104.2 | 103.3 | 106.7 | 99.9 | 100.3 | 100.3 | 100.7 |
| Մայիս | 101.2 | 105.4 | 101.9 | 108.7 | 99.6 | 99.9 | 100.6 | 101.3 |
| Հունիս | 101.4 | 106.8 | 102.3 | 111.2 | 99.5 | 99.4 | 100.3 | 101.6 |
| II եռամսյակ | 104.7[1] | 106.8 | 107.7[1] | 111.2 | 99.0[1] | 99.4 | 101.2[1] | 101.6 |
| Հուլիս | 94.5 | 101.0 | 91.0 | 101.3 | 99.6 | 99.1 | 100.3 | 101.9 |
| Օգոստոս | 97.7 | 98.6 | 96.1 | 97.3 | 100.0 | 99.0 | 100.1 | 102.0 |
| Սեպտեմբեր | 102.5 | 101.1 | 104.2 | 101.4 | 100.3 | 99.3 | 100.1 | 102.0 |
| IIIեռամսյակ | 94.6[1] | 101.1 | 91. 2[1] | 101.4 | 99.9[1] | 99.3 | 100.4[1] | 102.0 |
| Հոկտեմբեր | 99.9 | 101.0 | 99.7 | 101.1 | 100.1 | 99.4 | 99.6 | 101.6 |
| Նոյեմբեր | 102.2 | 103.3 | 103.7 | 104.8 | 100.5 | 99.9 | 99.8 | 101.4 |
| Դեկտեմբեր | 105.2 | 108.6 | 108.3 | 113.5 | 100.5 | 100.4 | 100.7 | 102.1 |
| IVեռամսյակ | 107.4[1] | 108.6 | 111.9[1] | 113.5 | 101.0[1] | 100.4 | 100.04[1] | 102.1 |

[1] *եռամսյակի վերջին ամիսը նախորդ եռամսյակի վերջին ամսվա համեմատ:*

ՀՀ սպառողական շուկայում պարենային (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2003թ. հունվար-դեկտեմբերին

*(նախորդ ամսվա համեմատ,%)*




***Պարենային ապրանքներ:*** 2003թ. հունվար-հոկտեմբերին պարենային ապրանքների շուկայում գրանցված տարաբնույթ գնային փոփոխություններին նոյեմբեր-դեկտեմբերին հաջորդել է 12.3% ընդհանուր գնաճ, ընդ որում գնաճի ամենաբարձր ցուցանիշը հաշվետու տարվա ընթացքում գրանցվել է դեկտեմբերին (8.3%), պայմանավորված դիտարկվող պարենային 13 ապրանքախմբերից 12-ում գրանցված 0.1-35.6% գնաճով: Պարենային ապրանքների գնային փոփոխություններին մեծապես նպաստել են հացամթերքի, ինչպես նաև գյուղատնտեսական մթերքի (բանջարեղենի, մրգի, ձկնամթերքի, ձվի) սեզոնայնությամբ պայմանավորված գնային փոփոխությունները:

2003թ. հունվար-մայիսին հացամթերքի ապրանքախմբում գրանցված գնային աննշան փոփոխություններին հունիս-դեկտեմբերին հաջորդել է զգալի գնաճ և 7 ամիսների ընդհանուր գնաճը կազմել է 31.8%: Գնաճի հարաբերականորեն բարձր ցուցանիշներ գրանցվել են հունիսին (11.4%), սեպտեմբերին (8.8%) և դեկտեմբերին (8.9%), պայմանավորված հացի, ալյուրի, մակարոնեղենի նկատելի գնաճով: Դեկտեմբերին նոյեմբերի համեմատ գրանցվել է ալյուրի 13.4% և մակարոնեղենի 15.3% գնաճ: Հացի գնաճը նշված ժամանակահատվածում կազմել է 8.2%: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում արձանագրվել է հացամթերքի 7.1-15.5% գնաճ, ընդ որում գնաճի ամենաբարձր ցուցանիշն գրանցվել է ք. Վանաձորում: Մայրաքաղաքում հացամթերքի գնաճը կազմել է 7.9%:

## Հացամթերքի գների փոփոխությունները 2003թ.

*(2002թ. դեկտեմբերի նկատմամբ,%)*




## Ալյուրի, հացի և մակարոնեղենի գների փոփոխությունները 2003թ.

*(2002թ. դեկտեմբերի նկատմամբ, %)*




## Հանրապետություն ներմուծված ցորենի ծավալներն ու գները

| | 2002թ. | | 2003թ. | | 2003թ. ներմուծված ցորենի գնի փոփոխությունը 2002թ. նկատմամբ,% | Հանրապետությունում արտադրված ցորենի 1կգ-ի իրացման միջին գինը (դրամ)[1] | | 2003թ. ցորենի իրացման գնի փոփոխությունը 2002թ. նկատմամբ,% |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ներմուծման ծավալը (տոննա)[2] | 1կգ-ի ներմուծման գինը (դրամ) | ներմուծման ծավալը (տոննա)[2] | 1կգ-ի ներմուծման գինը (դրամ) | | 2002 | 2003 | |
| Հունվար | 14546.2 | 74.7 | 16186.1 | 73.6 | 98.5 | 100.2 | 80.1 | 80.0 |
| Փետրվար | 26716.3 | 76.5 | 31404.5 | 77.7 | 101.6 | 105.2 | 90.1 | 85.6 |
| Մարտ | 25209.4 | 72.1 | 34371.6 | 77.5 | 107.5 | 101.3 | 93.3 | 92.1 |
| Ապրիլ | 30302.4 | 74.7 | 19051.1 | 76.5 | 102.4 | 101.8 | 97.5 | 95.8 |
| Մայիս | 42627.9 | 76.0 | 25026.2 | 74.9 | 98.6 | 129.1 | 91.3 | 70.7 |
| Հունիս | 17169.2 | 74.4 | 25089.6 | 76.0 | 102.2 | 96.8 | 93.8 | 96.8 |
| Հուլիս | 32425.1 | 72.4 | 11468.5 | 81.4 | 112.4 | 77.7 | 90.5 | 116.5 |
| Օգոստոս | 31290.7 | 78.5 | 8832. 6 | 80.5 | 102.5 | 77.1 | 103.2 | 134.0 |
| Սեպտեմբեր | 17950.9 | 74.1 | 48142.5 | 80.0 | 108.0 | 77.8 | 115.6 | 148.5 |

[1] *Ըստ ՀՀ-ում հետազոտվող 6000 գյուղացիական տնտեսությունների հարցման տվյալների:*

[2] *Առանց հումանիտար օգնության և ֆիզիկական անձանց:*

| | 2002թ. | | 2003թ. | | 2003թ. ներմուծված ցորենի գնի փոփոխությունը 2002թ. նկատմամբ,% | Հանրապետությունում արտադրված ցորենի 1կգ-ի իրացման միջին գինը (դրամ)[1] | | 2003թ. ցորենի իրացման գնի փոփոխությունը 2002թ. նկատմամբ,% |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ներմուծման ծավալը (տոննա)[2] | 1կգ-ի ներմուծման գինը (դրամ) | ներմուծման ծավալը (տոննա)[2] | 1կգ-ի ներմուծման գինը (դրամ) | | 2002 | 2003 | |
| Հոկտեմբեր | 27801.5 | 73.2 | 15381.0 | 90.2 | 123.2 | 81.1 | 120.1 | 148.0 |
| Նոյեմբեր | 22105.5 | 75.5 | 17552.1 | 87.5 | 115.9 | 80.5 | 126.6 | 157.3 |
| Դեկտեմբեր | 36962.4 | 78.2 | 49203.9 | 90.7 | 116.0 | 82.1 | 126.1 | 153.5 |
| ***Հունվար-դեկտեմբեր*** | ***325107.5*** | ***75.2*** | ***301709.5*** | ***80.9*** | ***107.5*** | ***79.5*** | ***106.9*** | ***134.5*** |

**Ցորենի արտադրության ծավալները հանրապետությունում**

*(հազ. տոննա)*

| | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2003թ. 2002թ. նկատմամբ,% |
|---|---|---|---|---|---|
| ***Հացահատիկ-ընդեղեն,ընդամենը*** | 224.8 | 367.3 | 415.5 | 310.0 | 74.6 |
| Ցորեն (աշնանացան և գարնանացան) | 177.8 | 241.7 | 284.6 | 216.7 | 76.1 |
| Ցորենի տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ ,% | 79.1 | 65.8 | 68.5 | 69.9 | x |

**Այլուրի արտադրության, ներկրման ծավալները և միջին գները հանրապետությունում**

*(տոննա)*

| | ***2002 թ.*** | | | ***2003թ.*** | | |
|---|---|---|---|---|---|---|
| | արտադրություն | ներմուծում | 1կգ ալյուրի ներմուծման գինը,դրամ | արտադրություն | ներմուծում | 1կգ ալյուրի ներմուծման գինը, դրամ |
| Հունվար | 8675.9 | 8273.6 | 171.5 | 9715.5 | . . .[1] | |
| Փետրվար | 8130.5 | 2038.5 | 121.6 | 11441.8 | . . . | |
| Մարտ | 9471.5 | 2444.4 | 198.8 | 11594.6 | 3.6 | 206.7 |
| Ապրիլ | 10055.1 | 0.5 | 211.7 | 13806.4 | 735.9 | 127.4 |
| Մայիս | 8268.9 | 401.6 | 203.5 | 12184.9 | 389.5 | 130.2 |
| Հունիս | 9577.5 | 4.1 | 193.6 | 10291.1 | 8.0 | 163.5 |
| Հուլիս | 8286.9 | 9.8 | 186.0 | 9476.1 | 41.0 | 88.5 |
| Օգոստոս | 6740.9 | 3.7 | 441.9 | 6009.9 | 33.9 | 285.9 |
| Սեպտեմբեր | 8801.7 | . . . | | 13192.0 | 1588.0 | 171.4 |
| Հոկտեմբեր | 8899.4 | . . . | | 12570.1 | 2341.4 | 180.6 |
| Նոյեմբեր | 11438.5 | 237.1 | 205.6 | 12296.8 | 28.4 | 160.2 |
| Դեկտեմբեր | 11531.7 | 755.5 | 202.7 | 8630.0 | 725.1 | 126.2 |
| *Հունվար-դեկտեմբեր* | *109878.5* | *14168.9* | *172.3* | *131390.7*[2] | *5894.7* | *161.3* |

2003թ. փետրվար-մայիս ամիսներին ծկնամթերքի ապրանքախմբում գրանցված ավելի քան 2 անգամ գնաճին հունիս-օգոստոսին հաջորդել է 61.7% գնանկում: Սեպտեմբեր-հոկտեմբերին արձանագրվել է 26.5% գնաճ, ինչը նոյեմբերին վերածվելով գնանկման, դեկտեմբերին դարձյալ փոխակերպվել է 35.6% գնաճի: Վերջինս հիմնականում պայմանավորվել է թարմ և ապխտած «սիգ» տեսակի ծկան, համապատասխանաբար, 38.0 և 49.4% գնաճով:

Բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում 2003թ. դեկտեմբերին 2002թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է 5.9% գնաճ, ինչը 3.6 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից (9.5%): 2003թ. մայիս-օգոստոսին հանրապետությունում գրանցված բանջարեղենի և կարտոֆիլի 50.6% գնանկմանը սեպտեմ-

[1] *Տվյալ ամսում ներմուծում չի իրականացվել:*
[2] *Ճշգրտումների արդյունքում ամսական ցուցանիշների հանրագումարը չի տալիս տարեկան ամփոփ ցուցանիշը:*

բերին հաջորդել է 11.9% գնաճ, իսկ հոկտեմբերին՝ դարձյալ գնանկում (5.3%), ինչը նոյեմբեր-դեկտեմբերին փոխակերպվել է 44.3% գնաճի: Դեկտեմբերին նոյեմբերի համեմատ բանջարեղենի և կարտոֆիլի գնաճը կազմել է 17.3%, ինչը լոլիկի (2.7 անգամ), կանաչ պղպեղի (2.5 անգամ), սմբուկի (81.4%), վարունգի (71.1%) գնաճի արդյունք է: Նշված ժամանակահատվածում կարտոֆիլի, գազարի, ճակնդեղի, գլուխ սոխի գնաճը կազմել է 1.7-13.7%:

**Բանջարեղենի և կարտոֆիլի գների ամսական փոփոխությունների դինամիկան 2001-2003թթ. հունվար-դեկտեմբերին**

*(նախորդ ամսվա նկատմամբ,%)*




2003թ. դեկտեմբերին 2002թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է մրգի 12.1% գնաճ, ինչը 16.7 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից (28.8%):

2003թ. փետրվար-մարտին հանրապետությունում գրանցված մրգի 18.4% ընդհանուր գնանկմանը ապրիլ-հունիսին հաջորդել է 51.2% գնաճ: Հուլիս-հոկտեմբերին սեզոնայնությամբ պայմանավորված 51.3% գնանկումը նոյեմբեր-դեկտեմբերին դարձյալ փոխակերպվել է գնաճի (երկու ամիսների ընդհանուր գնաճը կազմել է 43.7%): Դեկտեմբերին նոյեմբերի համեմատ մրգի գնաճը կազմել է 26.6%: Նշված ժամանակահատվածում արձանագրվել է խաղողի 22.7%, խնձորի 28.1% և տանձի 31.5% գնաճ: Ներմուծված (ցիտրուսային և արևադարձային) մրգից կիտրոնի գինն աճել է 0.5%, իսկ նարնջի, մանդարինի և աղամաքգի գները նվազել են 40.5-6.0%:

**Մրգի գների փոփոխությունները 2001-2003թթ.**

*(նախորդ ամսվա նկատմամբ,%)*



2003թ. փետրվար-հուլիսին հանրապետությունում գրանցված ձվի 27.9% ընդհանուր գնանկմանը օգոստոս-դեկտեմբերին հաջորդել է 40.2% ընդհանուր գնաճ: Դեկտեմբերին նոյեմբերի համեմատ ձվի գնաճը կազմել է 23.6%:

2003թ. փետրվար-օգոստոսին կաթնամթերքի ապրանքախմբում արձանագրված 7.1% գնանկմանը սեպտեմբեր-դեկտեմբերին հաջորդել է 4.3% գնաճ: Դեկտեմբերին նոյեմբերի համեմատ գրանցվել է կաթնամթերքի 1.6% գնաճ:

2003թ. դեկտեմբերին 2002թ. դեկտեմբերի համեմատ մսամթերքի գնաճը կազմել է 9.5% և 9.0 տոկոսային կետով գերազանցել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը (0.5%): 2003թ. մարտ-օգոստոսին մսամթերքի ապրանքախմբում գրանցված 5.8% գնաճին սեպտեմբեր-նոյեմբերին հաջորդել է 1.2% գնանկում, ինչը դեկտեմբերին դարձյալ փոխակերպվել է գնաճի՝ կազմելով 3.2%: Վերջինս մեծապես պայմանավորվել է ոչխարի 6.9% և խոզի 7.1% մսի գնաճով: Տավարի մսի գնաճը կազմել է 2.2%:

Ոգելից խմիչքի և ծխախոտի ապրանքախմբում 2003թ. հունվար-սեպտեմբերին գրանցված աննշան գնային փոփոխություններին հոկտեմբեր-դեկտեմբերին հաջորդել է 2.7% ընդհանուր գնաճ (հոկտեմբերին՝2.2%, նոյեմբերին՝ 0.3%, դեկտեմբերին՝ 0.1%), ընդ որում, եթե ծխախոտի գները նշված ժամանակահատվածում մնացել են անփոփոխ, ապա ոգելից խմիչքի ընդհանուր գնաճը կազմել է 19.8%: Դրան մեծապես նպաստել է տեղական արտադրության որոշ տեսակի գինիների և շամպայնի գնաճը:

**Գների փոփոխություններն ըստ պարենային առանձին ապրանքախմբերի**

*(նախորդ տարվա նկատմամբ, % )*

| | 2000 | 2001 | 2002 | 2003 |
|---|---|---|---|---|
| *Պարենային ապրանքներ* (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) | 97.8 | 104.2 | 101.2 | 106.1 |
| *Պարենային ապրանքներ* | 94.1 | 104.7 | 102.2 | 106.9 |
| հացամթերք | 96.7 | 97.6 | 97.9 | 108.6 |
| մսամթերք | 95.0 | 107.2 | 101.3 | 105.5 |
| ձկնամթերք | 93.7 | 115.0 | 140.2 | 109.2 |
| կաթնամթերք | 94.3 | 105.0 | 100.3 | 97.4 |
| ձու | 91.5 | 102.3 | 108.2 | 103.0 |
| կենդանական և բուսական յուղ | 90.4 | 98.3 | 101.5 | 104.0 |
| միրգ | 83.4 | 126.2 | 120.7 | 121.4 |
| բանջարեղեն և կարտոֆիլ | 90.9 | 127.0 | 104.3 | 111.0 |
| շաքարավազ | 96.6 | 112.7 | 99.4 | 101.9 |
| սուրճ, թեյ, կակաո | 92.0 | 96.5 | 98.4 | 100.3 |
| հրուշակեղեն | 96.6 | 98.3 | 101.3 | 101.6 |
| այլ մթերք | 97.3 | 97.2 | 99.9 | 99.2 |
| ոչ ոգելից խմիչք | 98.1 | 97.7 | 100.8 | 102.5 |
| *Ոգելից խմիչք և ծխախոտ* | 128.0 | 101.5 | 93.9 | 100.0 |

**Մի խումբ պարենային ապրանքների գների համեմատությունը տավարի մսի գնի նկատմամբ**

*(% )*

| | Չափի միավորը | *2002թ.* | | | | *2003թ.* | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | մարտ | հունիս | սեպտեմբեր | դեկտեմբեր | մարտ | հունիս | սեպտեմբեր | դեկտեմբեր |
| Միս տավարի | կգ | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 |
| Թարմ ձուկ «սիգ» | ,,-,, | 61.9 | 71.1 | 31.7 | 61.7 | 51.9 | 81.5 | 37.6 | 58.4 |
| Կաթ | լ | 24.2 | 21.1 | 21.9 | 23.0 | 23.8 | 21.6 | 21.8 | 23.3 |
| Պանիր «չանախ» | կգ | 123.6 | 112.5 | 111.1 | 110.8 | 104.9 | 98.0 | 96.4 | 102.8 |
| Կենդանական յուղ | ,,-,, | 139.3 | 122.9 | 120.1 | 119.7 | 113.1 | 110.2 | 122.3 | 128.3 |
| Բուսական յուղ | լ | 53.0 | 49.2 | 50.7 | 55.3 | 54.8 | 53.0 | 53.7 | 55.4 |
| Ձու | տասնյակ | 44.4 | 37.1 | 31.4 | 46.5 | 35.1 | 33.2 | 33.6 | 46.4 |
| Հաց I տեսակի | կգ | 19.2 | 17.7 | 18.2 | 17.9 | 17.0 | 17.6 | 18.5 | 20.9 |
| Հաց բարձր տեսակի | ,,-,, | 22.3 | 20.6 | 21.2 | 20.9 | 20.2 | 19.0 | 21.8 | 25.0 |

| | Չափի միավորը | 2002թ. | | | | 2003թ. | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | մարտ | հու-նիս | սեպ-տեմ-բեր | դեկ-տեմ-բեր | մարտ | հու-նիս | սեպ-տեմ-բեր | դեկ-տեմբեր |
| Մակարոն,վերմիշել | ,,-,, | 23.0 | 20.5 | 21.5 | 21.7 | 20.9 | 23.5 | 25.5 | 31.0 |
| Շաքարավազ | ,,-,, | 24.5 | 22.7 | 22.7 | 23.1 | 22.6 | 21.6 | 21.5 | 21.0 |
| Բրինձ | ,,-,, | 28.5 | 26.2 | 27.0 | 26.7 | 26.3 | 24.8 | 25.7 | 26.4 |
| Աղ | ,,-,, | 9.0 | 8.3 | 8.6 | 8.5 | 8.2 | 7.8 | 7.9 | 8.1 |
| Կարտոֆիլ | ,,-,, | 14.0 | 16.3 | 11.1 | 15.1 | 14.8 | 13.9 | 10.5 | 11.3 |
| Խնձոր | ,,-,, | 24.5 | 34.0 | 20.2 | 29.6 | 28.6 | 34.8 | 16.9 | 21.2 |
| Թեյ | ,,-,, | 291.4 | 265.7 | 275.3 | 269.2 | 258.8 | 246.4 | 249.4 | 253.4 |
| Սուրճ | ,,-,, | 223.3 | 202.1 | 208.9 | 204.5 | 198.0 | 186.9 | 189.1 | 189.1 |

Ակնհայտ է, որ 2003թ. դեկտեմբերին 2002թ. դեկտեմբերի համեմատ վերը նշված ապրանքատեսակներից մեծ մասի գները տավարի մսի գնի նկատմամբ ունեցել են անկման միտում (բերված ապրանքատեսակներից 10-ի գները նվազել են 15.8-0.1 տոկոսային կետով), ինչը, թերևս, պայմանավորվել է նշված ժամանակահատվածում տավարի մսի 6.7% գնաճով: Աղյուսակում բերված մյուս 6 ապրանքատեսակների գները տավարի մսի գնի նկատմամբ 2003թ. դեկտեմբերին 2002թ. դեկտեմբերի համեմատ աճել են 0.1-9.4 տոկոսային կետով:

**Պարենային մի խումբ ապրանքատեսակների միջին տարեկան հանրապետական գները**

*(դրամ)*

| | Չափի միավորը | 1999 | 2000 | 2001 | 2002 | 2003 |
|---|---|---|---|---|---|---|
| Միս տավարի | կգ | 1108 | 1011 | 1075 | 1112 | 1209 |
| Միս խոզի | - ,,- | 1122 | 1213 | 1386 | 1197 | 1282 |
| Կենդանական յուղ | - ,,- | 1557 | 1409 | 1429 | 1406 | 1407 |
| Բուսական յուղ | լ | 641 | 562 | 527 | 574 | 654 |
| Կաթ | - ,,- | 222 | 221 | 252 | 250 | 275 |
| Պանիր «Չանախ» | կգ | 1336 | 1235 | 1287 | 1283 | 1215 |
| Շաքարավազ | - ,,- | 239 | 230 | 259 | 258 | 263 |
| Բրինձ | - ,,- | 313 | 307 | 308 | 302 | 311 |
| Թարմ ձուկ «Սիգ» | - ,,- | 401 | 382 | 439 | 625 | 676 |
| Ձու | տասնյակ | 429 | 391 | 399 | 431 | 444 |
| Հաց ( I տեսակի ) | կգ | 216 | 211 | 206 | 203 | 215 |
| Աղ | - ,,- | 99 | 98 | 96 | 96 | 96 |
| Կարտոֆիլ | - ,,- | 127 | 107 | 143 | 154 | 149 |
| Կաղամբ | - ,,- | 85 | 82 | 125 | 86 | 99 |
| Գլուխ սոխ | - ,,- | 170 | 155 | 214 | 175 | 231 |
| Գազար | - ,,- | 146 | 109 | 166 | 147 | 161 |
| Խնձոր | - ,,- | 313 | 212 | 255 | 284 | 305 |
| Թեյ | - ,,- | 3347 | 3189 | 3135 | 3070 | 3052 |
| Սուրճ | - ,,- | 2614 | 2413 | 2360 | 2338 | 2315 |

***Ոչ պարենային ապրանքներ:*** 2003թ. դեկտեմբերին 2002թ. դեկտեմբերի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում արձանագրվել է 0.4% գնաճ, ինչը 2.3 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից:

2003թ. հունվար-դեկտեմբերին ոչ պարենային ապրանքների գնային փոփոխությունների վրա իրենց որոշակի ազդեցությունն են ունեցել բենզինի և դիզելային վառելիքի գնային փոփոխությունները:

**Բենզինի և դիզելային վառելիքի գնային փոփոխությունները 2003թ.**

*(2002թ. դեկտեմբերի նկատմամբ, %)*




**Մի խումբ ոչ պարենային ապրանքների գների ինդեքսները 2003թ.**

*(դեկտեմբերը 2002թ. դեկտեմբերի նկատմամբ, %)*




2003թ. նկատելի գնային փոփոխություններ են արձանագրվել վառելիքի ապրանքախմբում, ընդ որում, եթե փետրվար-օգոստոսին նկատվել է գնանկման միտում (ընդհանուր գնանկումը կազմել է 12.3%), ապա սեպտեմբեր-դեկտեմբերին գրանցվել է 13.8% գնաճ: Հարկ է նշել, որ նշված գնային փոփոխությունները հիմնականում պայմանավորվել են հեղուկ գազի և վառելափայտի գնային փոփոխություններով: Դեկտեմբերին նոյեմբերի համեմատ վառելիքի գնաճը կազմել է 4.6%, ինչը պայմանավորվել է վառելափայտի 5.8% թանկացումով: Հեղուկ գազի և նավթի գնաճը նշված ժամանակահատվածում կազմել է 4.5% և 4.7%:

Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները

*(նախորդ տարվա նկատմամբ,%)*

| | *2000* | *2001* | *2002* | *2003* |
|---|---|---|---|---|
| ***Ոչ պարենային ապրանքներ*** | 103.0 | 100.2 | 100.2 | 101.9 |
| *այդ թվում`* | | | | |
| հագուստ և կտորեղեն | 95.4 | 98.7 | 101.8 | 101.7 |
| վառելիք | 111.0 | 98.2 | 100.9 | 119.5 |
| կահույք | 100.0 | 100.8 | 102.0 | 100.5 |
| գորգեղեն | 101.0 | 100.2 | 101.1 | 103.7 |
| տեքստիլեղեն | 96.1 | 102.6 | 98.7 | 99.3 |
| կենցաղային էլեկտրաապրանքներ | 99.4 | 100.3 | 98.2 | 96.8 |
| խոհանոցային սպասք | 97.8 | 100.0 | 102.7 | 102.0 |
| լվացամիջոցներ | 95.9 | 102.9 | 104.0 | 100.6 |
| շինանյութեր | 101.2 | 102.3 | 99.4 | 99.1 |
| այգեգործական ապրանքներ | 99.0 | 98.5 | 98.4 | 100.8 |
| դեղամիջոցներ | 90.4 | 107.6 | 93.6 | 94.3 |
| անձնական օգտագործման մեքենաներ և բենզին | 131.7 | 98.2 | 96.7 | 108.0 |
| մշակույթի ապրանքներ | 93.9 | 98.1 | 101.5 | 98.8 |
| գրենական պիտույքներ | 90.7 | 102.6 | 103.4 | 99.5 |
| գեղահարդարման ապրանքներ | 94.9 | 98.4 | 101.3 | 100.8 |
| ոսկերչական ապրանքներ | 96.5 | 97.5 | 103.0 | 118.4 |
| անձնապիտո ապրանքներ | 98.1 | 98.4 | 100.6 | 100.4 |

***Ծառայություններ***: 2003թ. դեկտեմբերին 2002թ. դեկտեմբերի համեմատ ծառայությունների ոլորտում հանրապետությունում գրանցված սակագների 2.1% հավելաճը 0.6 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը (1.5%):

Ծառայությունների սակագների փոփոխությունները 2003թ.

*(նախորդ ամսվա նկատմամբ, %)*




Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները

*(նախորդ տարվա նկատմամբ,%)*

| | 2000 | 2001 | 2002 | 2003 |
|---|---|---|---|---|
| ***Ծառայություններ,*** *ընդամենը* | 101.5 | 101.3 | 101.1 | 101.9 |
| *այդ թվում`* | | | | |
| կենցաղային | 101.1 | 104.6 | 100.8 | 99.7 |
| բնակարանային-կոմունալ | 100.0 | 100.0 | 100.1 | 100.0 |
| բուժսպասարկման | 103.2 | 98.1 | 96.6 | 100.2 |
| տրանսպորտի | 100.7 | 101.2 | 100.2 | 104.8 |

| | 2000 | 2001 | 2002 | 2003 |
|---|---|---|---|---|
| կապի | 99.9 | 101.5 | 110.3 | 107.5 |
| մշակույթի | 103.7 | 103.4 | 115.3 | 108.4 |
| կրթության համակարգի | 112.4 | 102.9 | 103.9 | 101.8 |
| հանգստի կազմակերպման | 98.7 | 103.1 | 106.2 | 100.2 |
| հանրային սննդի | 101.9 | 100.9 | 99.8 | 102.9 |
| իրավական և բանկային | 102.0 | 101.9 | 100.0 | 99.9 |

**Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների ինդեքսները 2003թ.**
*(դեկտեմբերին 2002թ. դեկտեմբերի նկատմամբ, %)*




***Սպառողական գների և ծառայությունների սակագների տարածքային առանձնահատկությունները:*** 2003թ. դեկտեմբերին նոյեմբերի համեմատ հանրապետությունում դիտարկված բոլոր քաղաքներում սպառողական գներն աճել են 3.0-5.8%, ընդ որում գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է մայրաքաղաքում:

**Սպառողական գների ինդեքսը 1999-2003թ. դեկտեմբերին նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, ըստ դիտարկվող քաղաքների**

*(%)*

| | 1999 | 2000 | 2001 | 2002 | 2003 |
|---|---|---|---|---|---|
| *ՀՀ, ընդամենը* | 102.0 | 100.4 | 102.9 | 102.0 | 108.6 |
| *այդ թվում.* | | | | | |
| Երևան | 101.1 | 100.6 | 103.6 | 102.3 | 108.7 |
| Գյումրի | 101.4 | 101.0 | 102.6 | 102.7 | 106.2 |
| Վանաձոր | 101.2 | 100.6 | 101.7 | 101.9 | 109.3 |
| Վաղարշապատ | 100.0 | 100.9 | 100.4 | 100.7 | 110.0 |
| Թալին | 104.6 | 99.3 | 103.3 | 100.8 | 109.2 |
| Դիլիջան | 104.4 | 100.7 | 101.7 | 100.7 | 109.6 |
| Հրազդան, Չարենցավան | 107.1 | 97.7 | 102.1 | 102.3 | 105.8 |
| Եղեգնաձոր | 105.4 | 100.6 | 103.9 | 102.9 | 109.3 |
| Մարտունի | 105.3 | 99.7 | 101.8 | 100.1 | 110.4 |
| Կապան | 103.9 | 100.7 | 101.4 | 101.1 | 108.3 |

2003թ. դեկտեմբերին նոյեմբերի համեմատ հանրապետության դիտարկվող բոլոր քաղաքներում արձանագրվել է պարենային ապրանքների 4.4-9.4% գնաճ, ընդ որում գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է մայրաքաղաքում:

ՀՀ հետազոտվող բնակավայրերում կարևորագույն պարենային ապրանքների միջին գները դեկտեմբերի 30-ի դրությամբ

*(դրամ՝ կգ-ի համար)*

| | Միս տավարի | Պա-նիր | Կա-րագ | Բուսա-կան յուղ, լիտր | Ձու, տաս-նյակի համար | Շաքա-րա-վազ | Կար-տոֆիլ | Գլուխ սոխ | Կա-ղամբ | Խնձոր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | *2002թ.* | | | | | | | | | |
| ***ՀՀ, ընդամենը*** | 1178 | 1267 | 1370 | 630 | 594 | 265 | 175 | 235 | 93 | 591 |
| *այդ թվում՝* | | | | | | | | | | |
| Երևան | 1200 | 1313 | 1396 | 629 | 598 | 266 | 170 | 296 | 97 | 708 |
| Գյումրի | 1163 | 1238 | 1313 | 618 | 600 | 268 | 180 | 143 | 55 | 588 |
| Վանաձոր | 1100 | 1050 | 1266 | 636 | 596 | 252 | 166 | 180 | 122 | 400 |
| Վաղարշապատ | 1150 | 1200 | 1250 | 570 | 573 | 260 | 250 | 150 | 100 | 500 |
| Թալին | 1200 | 1300 | 1450 | 610 | 600 | 260 | 180 | 180 | 120 | 340 |
| Դիլիջան | 1100 | 1200 | 1400 | 685 | 600 | 263 | 200 | 150 | 80 | 350 |
| Հրազդան,Չարենցավան | 1250 | 1283 | 1300 | 650 | 575 | 260 | 180 | 127 | 65 | 300 |
| Եղեգնաձոր | 1200 | 1300 | 1400 | 670 | 550 | 260 | 180 | 130 | 150 | 400 |
| Մարտունի | 1000 | 1200 | 1400 | 650 | 600 | 270 | 130 | 150 | 70 | 550 |
| Կապան | 1200 | 1200 | 1480 | 652 | 600 | 274 | 156 | 160 | 100 | 300 |
| | *2003թ.* | | | | | | | | | |
| ***ՀՀ, ընդամենը*** | 1267 | 1275 | 1560 | 669 | 598 | 253 | 137 | 367 | 123 | 326 |
| *այդ թվում՝* | | | | | | | | | | |
| Երևան | 1283 | 1300 | 1538 | 659 | 608 | 255 | 145 | 393 | 153 | 329 |
| Գյումրի | 1250 | 1288 | 1550 | 663 | 588 | 270 | 115 | 293 | 58 | 425 |
| Վանաձոր | 1233 | 1216 | 1500 | 655 | 586 | 233 | 120 | 375 | 90 | 310 |
| Վաղարշապատ | 1300 | 1200 | 1550 | 680 | 580 | 240 | 130 | 300 | 100 | 300 |
